ԱՆՁԻ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

ԱՐՏԱՇԵՍ ՄԿՈՅԱՆ

Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան, ՀՀ, Գյումրի

Էլ.հասցե՝ artshesmkoyan01@gmail.com

DOI: 10.24234/scientific.v1i51.315

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածը վերաբերում ոչ միայն գիտական իմացությանը, այլև մասնագիտական կրթությանը: Հոդվածի նպատակն է անդրադառնալ անձի համոզմունքներին , որոնք էական դերակատարում ունեն գիտական աշխարհայացքի ձևավորման գործընթացում: Գիտելիքները իրենց կայացման ճանապարհին անցնում են բարդ ուղի բազմաթիվ անգամ կրկնելով նախորդ շրջանների ձեռքբերումների, հաջողությունների և անհաջողությունների ու կրած վնասների ազդեցությունները: Հոդվածը մի անդրադարձ է համոզմունքներին որպես հուսալի իմացության հզոր գործիքի: Որպես Մեթոբանական հիմք դիտարկվել են դետերմինացիայի անձի շարունակակ զարգացման սկզբունքները, իսկ որպես մեթոդ դիտարկվել է անձի կառուցվածքի և առկա գրականության վերլուծության մեթովները: Հոդվածի վերջնարդյունքը հանգում է այն գաղափարին որ կրթության վերջնաարդյունքը արդեն ձևավորված համոզմունքներն են գիտական իմացության գործընթացում: Հիմնական եզրակացության շրջանակում արձանագրվել է համոզմունքների բացառիկ դերակատարումը աշխարհայացքի դինամիկ զարգացումների գործընթացում:

Բանալի բառեր՝ *անձ, տեղ և դերակարում, համոզմունք, իմացություն, աշխարհայացք:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է, որ աշխարհայացքի ձևավորման խնդիրը պահանջում է ոչ միայն իմանալ նրա էությունն ու առանձնահատկությունները, այլև անձի կառուցվածքը, աշխարահայացքի կառուցվածքային բաղադրիչների հարաբերակցությունը: Աշխարհայացքը՝ որպես հասարակության և անձի հոգևոր կյանքի յուրահատուկ երևույթ, ունի բարդ, բազմաշերտ կառուցվածք: Հետազոտողներն աշխարհայացքի

կառուցվածքում առանձնացնում են տարբեր տարրեր՝ այն դիտարկելով որպես փիլիսոփայական, սոցիալ-քաղաքական և տնտեսագիտական հայացքների ամբողջություն:

Բոլոր ժամանակներում աշխարհայացքի խնդիրը մշտապես եղել է հետազոտողների ուշադրության կենտրոնում: Այդ բարդ կառուցվածքի տարբեր բաղադրիչներին անդրադարձել են բազմաթիվ նշանավոր հետազոտողներ, որոնց թվում են՝ Վ.Պ.Ռոժինը (Рожин, 1965), Պ.Ի.Գերասիմովը, Վ.Գ. Յակովլև (Яковлева,1997), Վ.Ֆ.Բեսպալչին և ուրիշներ: Նրանցից ոմանք Մ.Ն.Ալեքսևը (Алексеев, 1983), Գ.Ա.Գլեզերմանը, Ի.Յու. Լեռները (Лернер, 1980), Է.Մ.Մոնոսզոնն (Моносзон, 1966) աշխարհայացքի կառուցվածքում կարևոր տեղ են հատկացրել գիտական գիտելիքներին, դրանց բովանդակությանը և գործառույթներին:

Գիտական գիտելիքների առաջատար դերը աշխարհայացքի ձևավորման գործում բացատրվում է նրանցում օբյեկտիվ իրականության արտացոլման խորությամբ ու լայնությամբ, նպատակասլաց և կազմակերպված բնույթով: Գիտական գիտելիքների աշխարհայացքային ֆունկցիան որոշակիորեն արտահայտվում է օբյեկտիվ աշխարհի վերաբերյալ ինֆորմացիայի աղբյուր լինելու մեջ: Գիտական գիտելիքների մյուս աշխարհայացքային առանձնահատկությունն այն է, որ իմացության պրոցեսում նրանք հանդես են գալիս որպես տեսական հիմք այլ գիտելիքների համակարգերի կառուցման, տեսության ստեղծման համար:

Գիտելիքները, անշուշտ, անհրաժեշտ են գիտական աշխարհայացքի ձևավորման համար, քանի որ առանց ամուր գիտական հիմքի չի կարելի պատկերացնել ամբողջական աշխարհայացքը: Սակայն, աշխարհայացքը, ինչպես հայտնի է, չի սահմանափակվում սոսկ գիտելիքներով, որքան էլ դրանք լինեն հարուստ: Գիտական աշխարհայացքը իրենից ներկայացնում է գիտական հայացքների, համոզմունքների, գաղափարների, իդեալների, սկզբունքների, արժեքային կողմնորոշումների համակցություն: Գիտական աշխարհայացքի էությունն ուսումնասիրող հեղինակները աշխարհայացքի բարդ կառույցում, առաջին հերթին, առանձնացնում են գիտական աշխարհայացքային տարաբնույթ հայացքները, իսկ ոմանք էլ աշխարհայացքը դիտարկում են իբրև հայացքների ամբողջություն (Герасимов, 1989): Թեև հոգեբան Ն.Մենչինսկայան նշում է, թե այդ հայացքները բավարար չափով պարզաբանված չեն գիտության մեջ, սակայն, ընդունում է դրանց կարևոր դերը և տեղը աշխարհայացքի կառուցվածքում: Գիտական աշխարհայացքի կորիզը, ինչպես ասում են՝ քվինթէսենցիան, կազմում են գիտական համոզմունքները: Ուստի, պատահական չէ, որ վերջին երեք տասնամյակների ընթացքում շատ հետազոտողներ ուսումնասիրության առարկա են դարձրել անձի համոզմունքները: Այդ

գրականության ուսումնասիրությունից պարզվում է, որ «Համոզմունք» հասկացությունը տարբեր հեղինակներ օգտագործում են տարբեր իմաստային նշանակությամբ, մի հանգամանք, որը երբեմն տեղիք է տալիս որոշ թյուրիմացությունների:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հիրավի, «համոզմունք» հասկացությունը կարող է օգտագործվել և օգտագործվում է այլազան իմաստներով: Ուստի, պատահական չէ, որ հոգեբանամանկավարժական գրականության մեջ չկա միասնական կարծիք՝ համոզմունքների էության, ֆունկցիաների, կառուցվածքի, ձևավորման ուղիների և փուլերի մասին: Այսպես, օրինակ, համոզմունքը համարվում է խոր և հիմնավորված հավատ, մյուս դեպքում դիտվում է իբրև անձի գիտակցված պահանջմունքների համակարգ, երրորդ դեպքում՝ բնորոշվում է որպես շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների նկատմամբ մարդու ունեցած հարաբերություն: Այս իրավիճակը բացատրվում է այդ բարդ երևույթի՝ մինչև այժմ անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված չլինելով: Դա է պատճառը, որ դեռևս չկա պարզություն այն հարցում, թե ի՛նչ տարրերից է գոյանում համոզմունքը, որոնք են նրա կառուցվածքային բաղադրիչները, այդ երևույթի որ հատկություններն են առաջատար, որոշիչ, որոնց հաշվառմամբ հնարավոր է տալ այդ հասկացության գիտականորեն հիմնավորված բնորոշումը: Վերը նշված սահմանումներից ոչ մեկը չի կարող միաժամանակ վերաբերել թե՛ բարոյական, թե՛ քաղաքական, թե՛ իրավական, թե՛ գեղագիտական համոզմունքներին: ձևավորման ուղիների և փուլերի մասին: Այսպես, օրինակ, համոզմունքը համարվում է խոր և հիմնավորված հավատ, մյուս դեպքում դիտվում է իբրև անձի գիտակցված պահանջմունքների համակարգ, երրորդ դեպքում՝ բնորոշվում է որպես շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների նկատմամբ մարդու ունեցած հարաբերություն: Այս Այս իրավիճակը բացատրվում է այդ բարդ երևույթի՝ մինչև այժմ անհրաժեշտ խորությամբ ուսումնասիրված չլինելով: Դա է պատճառը, որ դեռևս չկա պարզություն այն հարցում, թե ի՛նչ տարրերից է գոյանում համոզմունքը, որոնք են նրա կառուցվածքային բաղադրիչները, այդ երևույթի որ հատկություններն են առաջատար, որոշիչ, որոնց հաշվառմամբ հնարավոր է տալ այդ հասկացության գիտականորեն հիմնավորված բնորոշումը: Վերը նշված սահմանումներից ոչ մեկը չի կարող միաժամանակ վերաբերել թե՛ բարոյական, թե՛ քաղաքական, թե՛ իրավական, թե՛ գեղագիտական համոզմունքներին: Համոզմունքները գնահատելիս կարելի է մոտենալ առնվազն երեք տեսանկյուններով՝ հոգեբանական, իմացաբանական և սոցիոլոգիական: Հարկ է դիտարկել նրա եռամիասնական ֆունկցիան՝ որպես մարդու ակտիվության ներքին դրդապատճառ, նրա հայացքների, գաղափարների վիճակ և

որպես սոցիալական նպատակասլացության գիծ: Համոզմունքների առաջացման և գործողության բարդ պայմաններն արտացոլվում են նրանց բովանդակության մեջ՝ իբրև մարդու զգացմունքների, մտքերի և կամքի հյուսվածք: Համոզմունքների բովանդակության մեջ կենտրոնանում են ամենից առաջ մարդու հոգեբանական բնութագիրը՝ հակումները, ցանկությունները, հետաքրքրությունները, ձգտումները, դիրքորոշումները, կողմնորոշումները, այսինքն՝ այն ամենը, ինչը նրանց հաղորդում է խոր անձնային բնույթ: Համոզմունքների մշակումը կապված է անձի հուզական վիճակների հետ, որոնք ուղեկցվում են վերապրումներով, իսկ վերջիններս ստեղծում են որոշակի ներքին ֆոն՝ եզրակացությունների՝ որպես համոզմունքների ձևավորման համար: Համոզմունքների բովանդակության մեջ մեծ տեղ են գրավում իմացական գործունեության հուզաազգացմունքային և վերացական-տրամաբանական արդյունքները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համոզմունքները հենվում են այն գիտելիքների վրա, որոնք օգտագործվում են դրանց ձևավորման համար՝ որպես ելակետային շինանյութ: Յուրաքանչյուր համոզմունք որոշակի գիտելիք է, թեև ամեն գիտելիք չէ որ դառնում է համոզմունք: Համոզմունքի մեջ մտնում են այն գիտելիքները, որոնք անցնում են մարդու ապրումների բովով՝ մասնակցելով նրա կենսական դիրքորոշումների, սկզբունքային վճիռների մշակմանը:

Համոզմունքը անհատական գիտակցության բարդ ձև է, որը միավորում է արտաքին աշխարհի երևույթների վերաբերյալ գիտելիքները, նրանց հավաստիության սուբյեկտիվ գնահատականը, հավատը նրա ճշտության նկատմամբ:

Համոզմունքը կայուն հայացք է, սեփական կարծիք, տեսակետ դարձած գիտելիք: Մարդու համոզմունքների հիմքում ընկած են որոշակի գիտելիքներ: Համոզմունքներն ու գիտելիքները ունեն ընդհանուր կողմեր: Երկուսն էլ իրականության նկատմամբ անձի ունեցած հարաբերության, իրականության սուբյեկտիվ արտացոլման արտահայտություն են: Դա նշանակում է, որ գիտելիքները և համոզմունքները բնության ու հասարակության անմիջական և միջնորդավորված ճանաչողության արդյունք են: Դրանք առաջանում են աշխարհի հետ մարդու ունեցած գործուն փոխներգործության ընթացքում և արտահայտում են ոչ միայն նրա համաձայնությունն աշխարհի հետ, այլև իրականության ակտիվ վերափոխումը: Սա պայմանավորված է նրանով, որ մարդկությունը հասել է գիտակցության և իրազեկության այնպիսի մակարդակի, որը թույլ է տալիս նրան գիտակցաբար կարգավորել իր հարաբերությունները սոցիալական ինստիտուտների և բնական տարրերի հետ՝ ուղղորդելով իր գործունեությունը գիտության և տեխնոլոգիայի, հաղորդակցության, կրթության և դաստիարակության

մեջ՝ սթափորեն հաշվի առնելով իր կարողությունների իրական սահմանները՝ հիմնվելով գիտական գիտելիքների և բնության, հասարակության և մշակույթի օբյեկտիվ օրենքների վրա: Այսօր փիլիսոփայության հիմնարար խնդիրն է ուսումնասիրել մարդու և բնության, մարդու և հասարակության, մարդու և մշակույթի միջև նոր հարաբերությունների այս դիալեկտիկան:

Անձի թե՛ գիտելիքներում, թե համոզմունքներում ամրակայվում է մարդկանց անհատական և կոլեկտիվ փորձը: Անձնական փորձը միջնորդավորվում է մարդկության կողմից ընդհանրացված գիտելիքներով, նրա պրակտիկայով: Այն չունի ինքնուրույն նշանակություն (Беспальчи, 1966): Մարդու անձնական կեցությունը, նրա գիտելիքները, գիտակցությունը այսպես թե այնպես բնորոշվում են հասարակական կեցությամբ և դրսևորվում են իբրև հասարակականի, օբյեկտիվի սուբյեկտիվ արտահայտություն: ինքնագիտակցության զարգացումը անմիջականորեն կապված է մարդու մտորումների հետ, այսինքն՝ իր մտավոր, հոգևոր և հոգեկան կարողությունների ըմբռնման և գնահատման հետ: Մարդու հոգևոր աշխարհը, կախված սոցիալական հանգամանքներից և անհատական բնութագրերից, կարող է զարգանալ ինչպես դրական, այնպես էլ բացասական: Սա բացատրվում է նրանով, որ մարդը կարող է լինել սոցիալապես դրական կամ սոցիալապես բացասական անհատականություն, ինչը օբյեկտիվորեն արտացոլվում է իր նպատակներին հասնելու նրա գործողություններում:

Գիտելիքների և համոզմունքների ընդհանրություններն ուսուցման և դաստիարակության պրակտիկայում որոշակի դժվարություններ են ստեղծում: Բանն այն է, որ երբեմն ոչ ճիշտ են ընտրվում գիտելիքների և համոզմունքների ընդհանրության օբյեկտիվ հատկանիշները, դրանց տարբերակման չափանիշները: Այդ պատճառով էլ հաճախ նույնացվում են ուսումնառողների գիտելիքները նրանց համոզմունքների հետ: Այս դեպքում պակաս արդյունավետ է դառնում սովորող երիտասարդության գիտական աշխարհայացքի ձևավորման աշխատանքը, դաստիարակության այդ կարևոր բնագավառում ճանապարհ է հարթվում ձևապաշտության՝ ֆորմալիզմի համար: Համոզմունքն այն գիտելիքն է, որն իմաստավորվում է սուբյեկտի կողմից, ստանում անձնային իմաստ: Դա մարդու ձեռք բերած գտելիքների, կենսափորձի միասնությունն է՝ բարձրացված սեփական կարծիքի մակարդակի: Համոզմունքը կապված է նրա ամբողջ էության հետ, առանց որի իմաստազրկվում են կյանքի բուն նպատակն ու գեղեցիկ իդեալները:

Համոզմունքի հիմքը գիտելիքն է, սակայն վերջինս անմիջապես չի մտնում գիտակցության ոլորտ: Կապված լինելով մարդու կենսափորձի հետ, անցնելով նրա մտքի ու սրտի «լաբորատորիայով»՝ համոզմունքը ձուլվում է անձի ներաշխարհին և

ապա դառնում նրա սեփականությունը: Այլ կերպ ասած, նրա համոզմունքն առաջին հերթին կապվում է մարդու մտավոր ոլորտի, նրա բանականության հետ, թեև ճիշտ չի լինի այն համարել միայն բանականության «պտուղը»: Գիտելիքը վերածվում է համոզմունքի, երբ համապատասխանում է մարդու կենսական պահանջմունքներին, որոնք միջնորդավորված են մարդկային հույզերով ու զգացմունքներով: Եվ որպեսզի

գիտելիքը ստանա անձնային իմաստ, անհրաժեշտ է այն վերապրել: Համոզմունքը հույզերով երանգավորված, զգացմունքներով իմաստավորված գիտելիքն է:

Մարդու պահանջմունքների վրա խարսխվող, զգացմունքներով իմաստավորված համոզմունքները սովորաբար ծառայում են իբրև գործողության ներքին ազդակներ, կամային գործողությունների մղող ուժ, դրդապատճառ: Համոզմունքները, ինչպես նկատեցինք, գործուն բնույթ են կրում, երբ խթանում են մարդու բնավորության կամային որակները, դրսևորում նրա գործելու պատրաստակամությունը, պահանջմունքները բավարարելու ձգտումը, նպատակասլացությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, համոզմունքներն առնչվում են անձի բանականության, զգացմունքների և կամքի հետ: Դրանք արտահայտում են անձնավորության էությունը: Այդ առումով եթե ծավալուն, համակարգված ձևով պատկերացնելու լինենք համոզմունքների բովանդակությունը, ապա կարելի կլինի առանձնացնել հետևյալ հիմնական բաղադրիչները.

1. մարդու գիտելիքներն արտաքին աշխարհի կարևորագույն հատկությունների ու հարաբերությունների մասին՝ անհատի կողմից որոշակի մտածողական նյութի յուրացման տեսքով,

2. այդ նյութի իմաստի հասկացում՝ արտացոլվող առարկաների նշանակության բացահայտման տեսքով,

3. իր հայացքների, պատկերացումների, գաղափարների գնահատում գիտելիքների և դրանցով արտացոլված արտաքին աշխարհի առարկաների համադրման միջոցով,

4. գիտելիքների յուրացման անհրաժեշտության հիմնավորում՝ ըստ տվյալ մարդու պահանջմունքների և հետաքրքրությունների,

5. գիտելիքից գործողության անցման անհրաժեշտության գիտակցում,

6. վճռի ընդունում, գործողության պլանի գնահատում,

7. ընդունած վճռի հիմնավորում, դրա ճշտության արտացոլում, սուբյեկտիվ պատրաստվածությունը՝ ակտիվ գործողության: Համոզմունքները՝ որպես ինտեգրատիվ գոյացումներ, իրենցից ներկայացնում են մարդու զգացմունքների, մտքերի և կամքի ձուլվածք, սակայն դրանց բովանդակությունը՝ առավել հստակ դրսևորվում է այն գաղափարների ու հայացքների օգնությամբ, որոնց հավաստիությանը ու նշանակությանը հավատում է մարդը և որոնք համարում է իր կենսագործունեության ելակետային ղեկավար սկզբունքներ:

Այսպիսով համոզմունքները չափազանց կարևոր տեղ ու դեր ունեն աշխարհայացքի կառուցվածքում և նրա մյուս բաղադրիչների՝ գիտելիքների, գաղափարների, հայացքների, իդեալների, արժեքային կողմնորոշումների հետ միասին կազմում են մի ամբողջական կուռ համակարգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մկոյան Ա.Ա. (2023) Անդրադարձ աշխարհայացքի և աշխարհայացքային գիտելիքի ձևավորման խնդիրներին, Երևան, ՀՊՄՀ գիտական տեղեկագիր, (*2*).

Մկոյան Ա.Ա. (2008) Աշխարահայացքի ձևավորման տեսությունը և պրակտիկան, Գյումրի, 2008.

Алексеев П. (1983), Наука и мировозрение, М.

Беспальчи В. Ф. (1966) Мировоззрение и труд, Киев.

Герасимов Г. И. (1989) Структура и основные черты научного мировоззрения Ростов-на- Дону, С. 8-33.

Лернер И. Я. (1980) Процесс обучения и его закономерности. М., Знание,

Менчинская Н. (1978), Психологические проблемы формирования мировозрения, М., под ред. Моносозна .

Менчинская Н. (1970) Вопросы умственного развития ребёнка.

Мкоян А.А. (2002) Педагогические эксперименты по формирования мировозрения, Наири.

Мкоян А.А. (2001) Принципы, критерии условия, пути и средсва формирования мировозрения студентов, Наири.

Мкоян А.А. (2001), Мировозрение личности: научно-теоретический очерк,Наири.

Моносзон Э. (1966) Формирование научного мировозрения учащиеся молодежи, М, Педагогика (*10*).

Рожин В. (1965) Пути формирования научного мировозрения, Л.

Яковлева Е. Л. (1997). Психология развития творческого потенциала личности. М.

Шмелев И.С. (2018). Проблемы национального самосознания: Традиции и новаторство. –М,ИМЛИ РАН.

REFERENCE LIST

Mkoyan A.A. (2023). Razmyshleniya o problemah mirovozzreniya i formirovaniya znanij o mirovozzrenii *(Reflections on the problems of worldview and the formation of knowledge about worldview)*, Erevan, Nauchnyj vestnik ASPU, (2).

Mkoyan A.A. (2008). Teoriya i praktika formirovaniya mirovozzreniya *(Theory and practice of worldview formation)*, Gyumri, 2008.

Alekseev P. (1983). Nauka i mirovozrenie *(Science and worldview)*, M.

Bespal'chi V. F. (1966). Mirovozzrenie i trud *(Worldview and work)*, Kiev.

Gerasimov G. I. (1989). Struktura i osnovnye cherty nauchnogo mirovozzreniya *(The structure and main features of the scientific worldview)* Rostov-na- Donu, C. 8-33.

Lerner I. Ya. (1980). Process obucheniya i ego zakonomernosti *(The learning process and its patterns)*. M., Znanie,

Menchinskaya N. (1978). Psihologicheskie problemy formirovaniya mirovozreniya *(Psychological problems of worldview formation)*, M., pod red. Monosozna .

Menchinskaya N. (1970). Voprosy umstvennogo razvitiya rebyonka *(Issues of mental development of a child)*.

Mkoyan A.A. (2002). Pedagogicheskie eksperimenty po formirovaniya mirovozreniya *(Pedagogical experiments in the formation of worldview)*, Nairi.

Mkoyan A.A. (2001). Principy, kriterii usloviya, puti i sredsva formirovaniya mirovozreniya studentov *(Principles, criteria, conditions, ways and means of forming students' worldviews)*, Nairi.

Mkoyan A.A. (2001). Mirovozrenie lichnosti: nauchno-teoreticheskij ocherk *(Personality's worldview: a scientific and theoretical essay)*, Nairi.

Monoszon E. (1966) Formirovanie nauchnogo mirovozreniya uchashchiesya molodezhi *(Formation of scientific worldview among young students)*, M, Pedagogika (10).

Rozhin V. (1965) Puti formirovaniya nauchnogo mirovozreniya *(Ways of forming a scientific worldview)*, L.

Yakovleva E. L. (1997). Psihologiya razvitiya tvorcheskogo potenciala lichnosti *(Psychology of the development of creative potential of an individual)*. M.

Shmelev I.S. (2018). Problemy nacional'nogo samosoznaniya: Tradicii i novatorstvo *(Problems of national identity: Traditions and innovation)*. M., IMLI RAN.

РЕЗЮМЕ

МЕСТО И РОЛЬ ЛИЧНЫХ УБЕЖДЕНИЙ В ОБЩЕЙ СТРУКТУРЕ НАУЧНОГО МИРОВОЗЗРЕНИЯ

Арташес Мкоян

Статья посвящена не только научным знаниям, но и профессиональному образованию. Цель статьи – рассмотреть убеждения человека, играющие значительную роль в процессе формирования научного мировоззрения. Знание проходит сложный путь к своему становлению, повторяя последствия достижений, успехов и неудач предыдущих периодов, а также многократно понесенные потери. Статья представляет собой размышление об убеждениях как мощном инструменте надежного знания. В качестве методологической основы рассмотрены принципы непрерывного развития личности-детерминанта, а в качестве метода – методы анализа структуры личности и существующая литература. Конечный результат статьи сводится к идее, что конечным результатом образования являются уже сформированные убеждения в процессе научного знания. Главный вывод отмечает исключительную роль убеждений в процессе динамического развития мировоззрения.

Ключевые слова: *личность, место и роль, убеждения, знания, мировоззрение.*

SUMMARY

THE PLACE AND ROLE OF PERSONAL CONVINCES IN THE GENERAL STRUCTURE OF THE SCIENTIFIC WORLDVIEW

Artashes Mkoyan

The article concerns not only scientific knowledge, but also professional education. The aim of the article is to address the beliefs of a person, which play a significant role in the process of forming a scientific worldview. Knowledge goes through a complex path on its way to its establishment, repeating the effects of achievements, successes and failures of previous periods and the losses suffered many times. The article is a reflection on beliefs as a powerful tool for reliable knowledge. The principles of the continuous development of the person of determination were considered as a methodological basis, and the methods of analyzing the structure of the person and the existing literature were considered as a method. The final result of the article comes down to the idea that the final result of education is already formed beliefs in the process of scientific knowledge. The main conclusion notes the exceptional role of beliefs in the process of dynamic developments of the worldview.

Keywords: *person, place and role, belief, knowledge, worldview.*

Հոդվածը ստացվել է՝ 30.01. 2026
Հոդվածն ուղարկվել է գրախոսման՝ 02.02. 2026
Հոդվածը երաշխավորվել է տպագրության՝ 27.03.2026